Արձանագրություն N 3

ՀԾԿՀ-20/3-ԳՀԾՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Սարյան 22

17 դեկտեմբերի 2019 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Արթուր Բեգլարյանը, Անուշ Սմբատյանը և քարտուղար՝ Սիլվա Հարությունյանը, բացակայում էր՝ Արսեն Թերզիկյանը:

Օրակարգ
Հայտերի բացման, գնահատման և անհամապատասխանությունների շտկման մասին

ՀԾԿՀ-20/3-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումները և գտնվելու վայրը			
	«Մանվել Ջալավյան» Ա/Ձ ք.Երևան, Մոսկովյան 25 3/1 տարածք	«ՍԵԳ» ՍՊԸ ք.Երևան, Մ.Խորենացի 112	«Բևեռային ուղի» ՍՊԸ ք.Երևան, Բագրատունյաց 27/1$_2$	«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ ք.Երևան, Արշակունյաց 5
	ԱԱՀ չվճարող	ԱԱՀ չվճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ չվճարող
	Գնային առաջարկը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/			
1	464 960	494 000	479 490	545 100

17.12.2019թ. հանձնաժողովը քննարկեց և որոշեց.

1. **Իրականացնել ներկայացված հայտերի գնահատում, որի արդյունքում հանձնաժողովը որոշեց՝**

   Մասնակցի հայտերում արձանագրված անհամապատասխանությունների հետ կապված կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակցին շտկումների վերաբերյալ՝ առաջարկելով մինչև նիստի կասեցման ավարտը շտկել հետևյալ անհամապատասխանությունները.

- «ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում դիմում-հայտարարությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև ներառված չէ ծառայությունների ցանկը /հավելված 2.1/:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ. դեկտեմբերի 18-ին ժամը 16:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0, բացակա 1:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Արթուր Բեգլարյանը
	_____	Անուշ Սմբատյան
քարտուղար	_____	Սիլվա Հարությունյան